

ՀՈԴՎԱԾՆԵՐ



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ա. Ֆ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անցած տասնամյակների ընթացքում Եվրոպական համայնքները և 1990-ականներին դրանց հիմքի վրա ստեղծված Եվրոպական միությունը (ԵՄ) դարձել են միջազգային հարաբերությունների ամենաակտիվ մասնակիցներից մեկը: Միացյալ Եվրոպայի պետություններն իրենց ընդհանուր արտաքին քաղաքականության միջոցով փորձում են աշխարհի տարբեր կողմերում տարածել եվրոպական արժեքներն ու նորմերը և ամրապնդել ԵՄ քաղաքական, տնտեսական ու սոցիալ-մշակութային ազդեցությունը: Եվրոպական միասնական արտաքին և անվտանգության քաղաքականության առաջնահերթություններից է Միության հարևանությամբ գտնվող պետությունների հետ հարաբերությունների աստիճանական զարգացումը, որի կարևորագույն մեխանիզմներից մեկը 2003թ. մեկնարկած Եվրոպական հարևանության քաղաքականությունն է (ԵՀՔ): Եվրամիության պաշտոնական հայտարարությունների համաձայն՝ ԵՀՔ-ի նպատակն է կանխել նոր բաժանարար գծերի առաջացումը ընդլայնված Եվրոպայի և հարևան պետությունների միջև: Եվրամիությունը ԵՀՔ շրջանակներում համագործակցում է Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տասը և նախկին խորհրդային վեց պետությունների, այդ թվում Հայաստանի հետ:

Եվրամիության և գործընկեր պետությունների միջև կնքվող համաձայնագրերում հաճախ են ներառվում քաղաքական երկխոսության մեխանիզմներին նվիրված կետեր: Այդ մեխանիզմները ԵՄ-ին և գործընկեր պետություններին հնարավորություն են ընձեռում ինստիտուցիոնալացված դաշտում կարգավորելու իրենց դիվանագիտական հարաբերությունները, իսկ որոշ դեպքերում օգնում են նրանց խորացնելու համագործակցությունը արտաքին քաղաքականության հիմնահարցերի շուրջ: Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ստորագրված փաստաթղթերը նույնպես պարունակում են նման կետեր: Այդ հարցերի լուսաբանմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Եվրամիության և գործընկեր պետությունների միջև քաղաքական երկխոսության մեխանիզմները տասնամյակների պատմություն ունեն: Առաջին անգամ դրանք շրջանառության մեջ են դրվել տակավին 1970-ական թթ.

սկզբներին «Եվրոպական քաղաքական համագործակցության»¹ (ԵՔՀ) շրջանակներում արաբական պետությունների հետ ծավալված հարաբերություններում: Այդ տարիներին Եվրոպական համայնքը (ԵՀ) այլ տարածաշրջանների հետ երկխոսություն ծավալելու համար նախատեսված հատուկ մեխանիզմներ չունեի, բացառությամբ, թերևս, ասոցացման պայմանագրերի և աֆրիկյան, խաղաղօվկիանոսյան և Կարիբյան ծովի ավազանի երկրների հետ կնքված Յաունդեի ու Լոմեի կոնվենցիաների², որոնք, սակայն, վերաբերում էին բացառապես տնտեսական խնդիրներին: Ուստի ԵՀ-ն ստիպված էր հանդես գալ բոլորովին նոր նախաձեռնությամբ՝ արաբական պետությունների պահանջը բավարարելու համար: Այդ նախաձեռնության անվանումն էր «Եվրա-արաբական երկխոսություն»: Իր այդ քայլով ԵՀ-ն, ըստ էության, ինստիտուցիոնալացրեց համայնքի, իսկ հետագայում Եվրոպական Միության արտաքին քաղաքականության կարևորագույն նորմերից մեկը, այն է՝ աշխարհի «անհանգիստ» անկյուններում տարածաշրջանային համագործակցության կամ ինտեգրման խրախուսում ԵՄ-ի օրինակով:

Ժամանակի ընթացքում «Եվրա-արաբական երկխոսության» նախադեպը ԵՄ-ին թույլ տվեց աստիճանաբար ընդլայնելու իր գործունեությունն ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր տարածաշրջաններում: Կասկածից վեր է, որ Եվրամիության հարևան երկրներում տիրող քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը զգալի ազդեցություն է թողնում այդ կառույցի և դրա առանձին անդամ պետությունների վրա: Ուստի զարմանալի չէ, որ ԵՀՔ-ն հիմնված է կայունացման և ներգրավման սկզբունքների վրա: Ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության, արդար կառավարման, շուկայական տնտեսության և կայուն զարգացման սկզբունքների ու արժեքների պահպանման դիմաց Միությունը հարևան զարգացող պետություններին խոստանում է քաղաքական հարաբերությունների և տնտեսական ինտեգրման խորացում: Եվրամիությունը ԵՀՔ-ի միջոցով ձգտում է իր շուրջն արդար կառավարվող պետությունների օղակ ստեղծել, որոնց հետ կարելի է սերտորեն համագործակցել³: Նշվածը կարելի է համարել Եվրամիության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության և դրա մաս կազմող Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության

¹ «Եվրոպական քաղաքական համագործակցություն» նախաձեռնությունը կյանքի է կոչվել 1970 թ.: Այն Եվրոպական համայնքի անդամ պետությունների արտաքին քաղաքականությունները համակարգելու առաջին հաջողված փորձն էր: Դրա հիման վրա 1990-ական թթ. կազմավորվեց Եվրամիության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը (ԸԱԱՔ):

² Եվրոպական համայնքի և նորանկախ նախկին աֆրիկյան գաղութների միջև հարաբերությունները կարգավորող Յաունդեի երկու կոնվենցիաները կնքվել են 1960-70-ական թթ.: Հետագայում (1970-90-ական թթ.) դրանց հիման վրա ԵՀ-ի և աֆրիկյան, խաղաղօվկիանոսյան և Կարիբյան ծովի ավազանի 71 պետությունների միջև կնքվել են Լոմեի չորս կոնվենցիաները, որոնցով կարգավորվում էին առևտրի և մարդասիրական օգնության հետ կապված հարցեր:

³ Տե՛ս **Javier Solana**, A secure Europe in a better world - European security strategy, Brussels, 12 December 2003:

(ԵԱՊԶ) առանցքային նպատակներից մեկը: ԵՀԶ-ն, փաստորեն, ԸԱԱԶ-ի⁴ խնդիրների տրամաբանական շարունակությունն է:

Քաղաքական երկխոսությունը ԵՀԶ-ի հիմնական բաղադրիչներից է և հատուկ հիշատակության է արժանանում Եվրամիության ղեկավար մարմինների կողմից ընդունված ռազմավարական փաստաթղթերում: Օրինակ, ԵՄ-ի Ընդհանուր հարցերի և արտաքին հարաբերությունների գծով խորհուրդը 2003թ. հատուկ ընդգծել է ԵՄ անդամ պետությունների և ԵՀԶ գործընկերների՝ հակամարտությունների կանխարգելման և հակամարտությունների կարգավորման հարցերում ընդհանուր պատասխանատվության կարևորությունը, իսկ 2004թ. մայիսին Եվրահանձնաժողովի կողմից ընդունված ԵՀԶ-ի ռազմավարական փաստաթուղթն անդրադառնում է «քաղաքական երկխոսության հաստատված ձևաչափերի շրջանակներում առկա համակարգման մեխանիզմների բարելավման» կարևորությունը, «գործընկեր երկրների հնարավոր մասնակցությանը ԵՄ-ի կողմից ղեկավարվող ճգնաժամերի կառավարման գործողություններին»⁵:

Նկատի ունենալով, որ ԵՀԶ-ն համեմատաբար երիտասարդ ծրագիր է՝ դրա ազդեցության մասին միանշանակ դատողություններ կատարելը բարդ է: Վերլուծաբանների կարծիքով, ԵՀԶ-ի արդյունավետությունը դժվար է առանձնացնել ԵՄ-ի կողմից կիրառվող քաղաքական մյուս գործիքների և մեխանիզմների արդյունավետությունից: Ուստի սխալ կլինի ենթադրել, թե քաղաքական երկխոսության խրախուսումը հարևան տարածաշրջաններում ամբողջապես կախված է եղել ԵՀԶ գործընթացից: Խնդիրն առավել մանրամասն ուսումնասիրելու համար ստորև քննարկվում է Եվրամիություն-Հայաստան հարաբերությունների օրինակը, մասնավորապես՝ Եվրամիություն-Հայաստան երկխոսությունն արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերի շուրջ ԵՀԶ-ի Գործողությունների ծրագրի (ԳԾ) շրջանակներում:

Ի տարբերություն Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրների, որոնց հետ ԵՄ-ն համագործակցության երկար պատմություն ունի, նախկին խորհրդային հանրապետությունների հետ հարաբերությունները բավականին «թարմ» են: Չնայած Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրերի (ԳՀՀ) կնքմանը, ՏԱՍԻՍ (Տեխնիկական աջակցություն Անկախ պետությունների համագործակցությանը) ծրագրի ակտիվ իրականացմանը և Ռուսաստանի ու Ուկրաինայի հետ հաստատված ռազմավարական գործընկերությանը՝ ԵՀԶ-ի ընդունումից առաջ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ (բացառությամբ Մերձբալթյան եռյակի) քաղաքական երկխոսության մակարդակը այնքան էլ տպավորիչ չէր: Նախկին ԽՍՀՄ տարածքում Եվրամիության ազդեցությունը տարածելու

⁴ ԸԱԱԶ-ն 1992թ. Մասսաչուսեթսի պայմանագրով կազմավորված Եվրամիության, այսպես կոչված, երեք «սյուններից» երկրորդն է և ԵՄ անդամ պետությունների՝ արտաքին քաղաքականության և անվտանգության խնդիրների շուրջ միջկառավարական համագործակցության հիմնական մեխանիզմը: ԵԱՊԶ-ն ԸԱԱԶ-ի գլխավոր տարրերից՝ բաղադրիչներից, մեկն է. այն նվիրված է ԵՄ արտաքին քաղաքականության պաշտպանական և ռազմական տեսանկյուններին:

⁵ Communication from the Commission: European Neighbourhood Policy Strategy Paper, COM(2004) 373, Brussels, 12.5.2004:

մեխանիզմները (մասնավորապես Գ-ՀՀ-ն) բավարար չէին ցանկալի փոփոխություններին հասնելու համար, քանի որ բացակայում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների նկատմամբ կիրառվող պայմանականությունների քաղաքականությունը վարելու հնարավորությունը: Ավելին, ԵՄ-ում, ըստ էության, բացակայում էր նախկին ԽՍՀՄ 12 հանրապետությունների հետ առավել սերտ կապեր հաստատելու ցանկությունը:

Այնուամենայնիվ, 2001-ից հետո ի հայտ եկան մի շարք գործոններ, որոնք նշանակալիորեն մեծացրին Եվրամիության ուշադրությունը տարածաշրջանի նկատմամբ: Այդ գործոններից մեկը Վրաստանում և Ուկրաինայում տեղի ունեցած «հեղափոխություններն» էին, որոնք վերակողմնորոշեցին այդ երկրների արտաքին քաղաքականությունը դեպի ԵՄ: Երկրորդը, 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններն էին, որոնք բարձրացրին Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի ռազմավարական նշանակությունը ԱՄՆ-ի և Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) համար, այդ թվում ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական խոշոր պետություններից մի քանիսի (հատկապես Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի) համար, որոնք արդեն իսկ ներգրավված էին հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հովանու ներքո անցկացվող միջնորդական նախաձեռնություններում: ԵՀԶ-ում տարածաշրջանի երկրների ընդգրկման համար խթան հանդիսացած մյուս կարևոր գործոնը, իհարկե, Եվրամիության հերթական ընդլայնումն էր (2004 թ.), որի հետևանքով ԵՄ-ի անմիջական հարևանների շարքում հայտնվեցին Բելառուսը և Ուկրաինան: Բացի այդ, Թուրքիայի անդամակցության շուրջ բանակցություններ սկսելու մասին որոշումն ընդունելիս (2004 թ.) Եվրամիությունը, անշուշտ, հաշվի էր առնում, որ արևելքում Թուրքիան սահմանակից է Հարավային Կովկասի երեք ճանաչված հանրապետություններին: Ռումինիայի անդամակցության հեռանկարն էլ (2007 թ.) «հարկադրեց» Եվրամիությանը պատշաճ ուշադրություն դարձնել հարևան Մոլդովայում տիրող վիճակին: Էական դեր խաղացին նաև ԵՄ անդամ պետությունների՝ էներգետիկ անվտանգության հետ կապված մտահոգությունները, այդ թվում՝ ռուսական բնական գազից Եվրոպայի կախվածությանը վերջ տալու ցանկությունը:

Ելնելով նշված նկատառումներից՝ Ուկրաինան և Մոլդովան ի սկզբանե ներառվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակների մեջ: Ռուսաստանը որոշեց չմասնակցել այդ նախաձեռնությանը և հետամուտ լինել 2003 թ. ԵՄ-ի հետ համաձայնեցված համագործակցության «չորս ընդհանուր ոլորտների»⁶ զարգացմանը: Հարավային Կովկասի

⁶ 2003 թ. ԵՄ-ն և Ռուսաստանը որոշեցին ամրապնդել իրենց համագործակցությունը՝ 1997 թ. կնքված Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում ներառված չորս ընդհանուր ոլորտները զարգացնելու միջոցով: Խոսքն ընդհանուր տնտեսական, ազատության, անվտանգության և արդարության, արտաքին անվտանգության հարցերի շուրջ համագործակցության և գիտության, կրթության ու մշակութային փոխանակումների ընդհանուր ոլորտների մասին է:

պետությունները սկզբում բացակայում էին հարևանության քաղաքականության ցանկից, սակայն 2004 թ. կեսերին ընդգրկվեցին դրանում: Հարկ է նշել, որ Հարավային Կովկասի պետությունների «բացթողումը» քաղաքական նպատակ էր հետապնդում: Սկզբում Եվրահանձնաժողովը զգուշանում էր տարածաշրջանում առկա բազմաթիվ խնդիրներից, սակայն ավելի ուշ փոխեց կարծիքը և որոշեց, որ ԵՀԶ-ն կարող է նպաստել ներքին կառավարման և տարածաշրջանային կայունության բարելավմանը:

Անդրադառնալով Եվրամիություն-Հայաստան հարաբերություններին՝ նշենք, որ հետխորհրդային շրջանում Եվրամիությունը միջազգային առաջին կառույցներից էր, որ առատաձեռն օգնություն տրամադրեց Հայաստանի Հանրապետությանը՝ անցումային շրջանի դժվարությունները հաղթահարելու նպատակով: Հայաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո թե՛ ԵՄ-ի ինստիտուտները և թե՛ առանձին անդամ պետությունները հանդես եկան բազմաթիվ տարածաշրջանային և տեղական նախաձեռնություններով ու ծրագրերով (ինչպիսիք են, օրինակ, ՏԱՄԻՍ-ը, Պարենային ապահովման ծրագիրը և Բացառիկ ֆինանսական օժանդակության ծրագիրը). սկզբնական շրջանում այդ ծրագրերի հիմնական ուղղվածությունը մարդասիրական օգնության ապահովումն էր, սակայն հետագայում դրանք տեխնիկական և ֆինանսական աջակցության աղբյուր դարձան Հայաստանի համար: Միայն 1991-2002 թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ-ն Հայաստանին տրամադրել է շուրջ 319 միլիոն եվրո դրամաշնորհներ և 86 միլիոն եվրո վարկեր: Նույն ժամանակահատվածում Եվրամիության առանձին անդամ պետությունների կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը գերազանցել է 282 միլիոն եվրոն⁷: Եվրամիություն-Հայաստան իրավապայմանագրային հարաբերությունների անկյունաքարը դարձավ 1996 թ. ստորագրված Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրը, որն ուժի մեջ մտավ 1999 թ.: ԳՀՀ-ն կողմերի միջև ապահովում է լայնածավալ գործակցություն քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսական, իրավական և մշակութային համագործակցության ոլորտներում: Ըստ ԳՀՀ-ի 5-րդ հոդվածի՝ քաղաքական երկխոսությունն աստիճանաբար կհանգեցնի փոխադարձ հետաքրքրության առարկա հանդիսացող միջազգային հիմնահարցերի շուրջ կողմերի դիրքորոշումների մերձեցմանը՝ դրանով նպաստելով տարածաշրջանում անվտանգության ու կայունության մեծացմանը և Անդրկովկասի անկախ պետությունների զարգացմանը: Ավելին, քաղաքական երկխոսության նպատակներից մեկն է նաև խրախուսել կողմերի համագործակցությունը Եվրոպայում կայունության և անվտանգության ամրապնդմանը վերաբերող հարցերի շուրջ: Նույն հոդվածի համաձայն՝ երկխոսությունը կարող է տարածաշրջանային բնույթ կրել տարածաշրջանում առկա հակամարտությունների ու անհաշտությունների կարգավորմանը նպաստելու առումով⁸:

⁷ Տվյալները վերցված են Հայաստանում Եվրոպական Միության առևտրի պալատի վեբ-կայքից՝ <http://www.eucca.am/?page=content&parent=EU%20Armenia%20Relationship&link=EU%20Armenia%20Relationship>, 31.05.09թ.:

⁸ Տե՛ս Հոդված 5, Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիր Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև (անգլերեն տարբերակը), էջ 6:

ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագիրն ընդունվել է ԳՀՀ-ի հիման վրա 2006 թ. նոյեմբերին (հինգ տարի ժամկետով)⁹: Ծրագրի իրականացմանը կողմերը հետևում են ԳՀՀ-ով ստեղծված քաղաքական երկխոսության մարմինների՝ ԵՄ-Հայաստան համագործակցության խորհրդի, ԵՄ-Հայաստան համագործակցության կոմիտեի, ինչպես նաև առևտրի, տնտեսական ու իրավական հարցերով ենթակոմիտեի միջոցով: Ծրագրի իրականացմանն աջակցում է նաև Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը՝ իր մանդատի շրջանակներում: Հատուկ ներկայացուցչի աշխատանքի առաջնային նպատակը տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորումն է: Գործողությունների ծրագիրը վերահաստատում է, որ ԵՄ-ն, ԵԱՀԿ-ի հետ խորհրդակցելով, պատրաստ է աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը՝ իր ունեցած մեխանիզմների ու ռեսուրսների շրջանակներում: Ըստ փաստաթղթի՝ Եվրամիությունը պատրաստ է դիտարկել հակամարտության կարգավորման և հետհակամարտային վերականգնողական գործընթացներին իր ներգրավվածության ամրապնդման ուղիները:

Գործողությունների ծրագիրը սահմանում է ԳՀՀ-ի շրջանակներում ընդգրկված և դրանից դուրս գոյություն ունեցող գերակայությունների համապարփակ շրջանակ: Այդ գերակայությունների շարքում կան մի շարք գործողություններ, որոնք անմիջականորեն առնչվում են համագործակցությանը արտաքին և անվտանգության քաղաքականության բնագավառում, հակամարտությունների կանխարգելմանը և ճգնաժամերի կառավարմանը: Ինչպես մյուս ոլորտներում, արտաքին և անվտանգության խնդիրների շուրջ քաղաքական երկխոսության և համագործակցության բնագավառում նույնպես ԵՄ-Հայաստան ԳԾ-ն մի շարք նպատակներ և գործողություններ է նախատեսում, որոնց թվին են պատկանում տարածաշրջանային և միջազգային խնդիրները, ներառյալ Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում, ինչպես նաև Եվրոպական անվտանգության ռազմավարության իրականացման շուրջ ԵՄ-Հայաստան քաղաքական երկխոսության զարգացումը, ընդհանուր արտաքին, անվտանգության և պաշտպանության քաղաքականության շուրջ քաղաքական երկխոսության խորացումն ու տեղեկատվության փոխանակումը, Միջազգային քրեական դատարանի կանոնադրությանը Հայաստանի միանալու գործընթացի նախաձեռնումը, պայքարը միջազգային սահաբեկչության և միջազգային հանցավորության դեմ, հետագա համագործակցությունն ընդհանուր անվտանգության սպառնալիքներին, այդ թվում զանգվածային ոչնչացման զենքերի չտարածմանը և զենքի ապօրինի արտահանմանն արձագանքելուն և այլն:

ԵՄ-Հայաստան ԳԾ ընդունումից հետո Եվրահանձնաժողովը հրապարակել է երկու միջանկյալ հաշվետվություն ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ¹⁰: Երկու հաշվետվություններն էլ շեշտում են, որ Հայաստանը

⁹ Տե՛ս ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագիր, ոչ պաշտոնական թարգմանություն, էջ 7-8, 10-12:

¹⁰ Առաջին տարեկան հաշվետվությունը հրապարակվել է 2008 թ. ապրիլի 3-ին և ներկայացնում է 2006 թ. նոյեմբերից մինչև 2007 թ. դեկտեմբերի 31-ն արձանագրված

միացել է տարածաշրջանային և միջազգային հարցերի շուրջ ԵՄ-ի՝ ԸԱԱԶ-ի շրջանակներում ընդունած դիրքորոշումներից շատերին և առհասարակ «շատ ակտիվ է ԸԱԱԶ-ի հետ կապված հարցերի շուրջ համագործակցության գործում»: Հարկ է նշել, որ ԸԱԱԶ-ի շրջանակներում ընդունվող հայտարարություններին միանալու մասին դրույթը հարավկովկասյան երկրների Գործողությունների ծրագրերում ներառվել է դժվարությամբ՝ Հայաստանի և Վրաստանի կողմից համառ ջանքերի գործադրման շնորհիվ: ԸԱԱԶ-ի հայտարարություններին միանալը և ԵՄ-ի կողմից Հայաստանի եվրոպական ձգտումների ճանաչումը ԳԾ-ում ներառված այն երկու կարևորագույն դրույթներն են, որոնք, հայկական կողմի համոզմամբ, ապահովում են Եվրամիության և Հայաստանի քաղաքական մերձեցումը: Հայաստանը ԸԱԱԶ-ի հայտարարություններին միանում է ընտրովիության սկզբունքով, սակայն այդ հայտարարություններին միանալը Հայաստանի պարտավորություններից է: Ուստի ընտրովիության սկզբունքը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, քանի որ Եվրամիությունը բացասաբար է վերաբերվում դրա չարաշահմանը, իսկ ԵՀԶ ԳԾ մոնիտորինգի ժամանակ եվրոպացի պաշտոնյաները հատուկ ուշադրություն են դարձնում ԵՄ-ի դիրքորոշումներին միանալու չափին¹¹: ԵՄ-Հայաստան ԳԾ կատարման ընթացքի մասին երկրորդ միջանկյալ հաշվետվության տվյալներով Երևանը միացել է այդ հայտարարությունների 80%-ին, ինչը բավականին բարձր ցուցանիշ է:

Վերոհիշյալ հաշվետվություններում նշված է նաև, որ Հայաստանը համագործակցում է միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի՝ թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի, ԻՆՏԵՐՊՈԼ-ի, Համաշխարհային մաքսային կազմակերպության, ԱՊՀ-ի և Եվրոպայի խորհրդի հետ ահաբեկչությանն առնչվող խնդիրների մասին տեղեկատվության փոխանակման ասպարեզում: Հայաստանը բարեհաջող համագործակցում է նաև ՄԱԿ-ի Հակահարբեկչական կոմիտեի հետ, որը ստեղծվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1373 բանաձևի հիման վրա:

Առաջընթաց, սակայն, չի գրանցվել Միջազգային քրեական դատարանի կանոնադրության վավերացման գործընթացում¹²: Բացի այդ, Հայաստանը

առաջընթացը, երկրորդը՝ 2009 թ. ապրիլի 23-ին և վերաբերում է 2008 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածին: Երկու հաշվետվություններն էլ տեղադրված են Եվրամիության պաշտոնական կայքէջում՝ http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2009/sec09_511_en.pdf և http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2008/sec08_392_en.pdf, 31.05.09թ.:

¹¹ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության ընթացիկ արխիվ, գործ 10, Տեղեկանք ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչությունից, 21.06.2007:

¹² Թե՛ն Հայաստանը կանոնադրությունը ստորագրել էր դեռ 1999թ., սակայն 2004թ. ՀՀ սահմանադրական դատարանը վճռեց, որ փաստաթուղթը համահունչ չէ ազգային օրենսդրությանը, որովհետև ա) Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ազգային դատական համակարգը (ինչը հակասում է Սահմանադրության 91-րդ և 92-րդ հոդվածներին) և բ) ՀՀ իշխանությունները կարող են գրկվել ներում շնորհելու իրավունքից: Սահմանադրական դատարանի այս վճիռը, փաստորեն, կասեցրել է վավերացման գործընթացը: Այն վերակենդանացնելու համար անհրաժեշտ է, որ ՄԴ-ն վերանայի իր որոշումը:

դեռևս չի միացել 1997 թ. հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրման, փոխանցման արգելման և դրանց ոչնչացման մասին Օտտավայի կոնվենցիային¹³: Երկու դեպքում էլ առաջընթացի բացակայությունը, ըստ էության, պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ: Հայաստանն ու Ադրբեյջանը չեն ցանկանում ստանձնել այնպիսի պարտավորություններ, որոնք ենթադրաբար կարող են թուլացնել իրենց դիրքերը մարտի դաշտում և դրանից դուրս: Օրինակ, Ադրբեյջանի հետ սահմանի երկայնքով տեղադրված հակահետևակային ականներին մեծ նշանակություն է տրվում՝ իբրև Հայաստանի պաշտպանությունն ապահովող գործոն, և խաղաղության բացակայության պայմաններում սահմանի ականագերծումը, բնականաբար, Հայաստանի կողմից նպատակահարմար չի համարվում:

Ի մի բերելով ԵՄ-Հայաստան ԵՀԶ ԳԾ-ով նախատեսված փոխգործակցությունը արտաքին և անվտանգության հարաբերությունների ասպարեզում՝ կարելի է արձանագրել, որ կողմերն առայժմ չեն օգտագործել այս ոլորտում համագործակցության համար առկա ողջ ներուժը: Ծրագրով նախատեսված գործողություններն այն ընդհանուր հայտարարն են, որին կողմերը կարողացել են հանգել բանակցությունների ընթացքում, և դրանց լիարժեք իրականացումը նոր որակ կարող է տալ ԵՄ-Հայաստան հարաբերություններին: Սակայն մինչ օրս կատարված քայլերը վկայում են այն մասին, որ առաջընթաց արձանագրվել է այն գործողությունների ուղղությամբ, որոնք բնույթով խիստ պարտավորեցնող չեն: Օրինակ, ԸԱԱԶ-ի հայտարարությունները, որոնց Հայաստանը ակտիվորեն միանում է, պարտադիր իրավական ուժ չունեցող փաստաթղթեր են, որոնք արտահայտում են ԵՄ-ի անդամ պետությունների ընդհանուր տեսակետը արտաքին քաղաքականության որևէ խնդրի շուրջ: Ավելին, պաշտոնական Երևանը, ջանալով խուսափել խնդրահարույց իրավիճակներից, միանում է հիմնականում այն հայտարարություններին, որոնք Հայաստանի հարևան կամ դաշնակից երկրներին չեն առնչվում: Մյուս կողմից, ակնբախ է, որ մինչ օրս չի հաջողվել կատարել Գործողությունների ծրագրի արտաքին քաղաքական բաժնի այն կետերը, որոնք տարածաշրջանում առկա հակամարտությունների չլուծվածության պայմաններում պահանջում են որոշակիորեն խմբագրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության

¹³ Պաշտոնական Երևանի դիրքորոշումը հետևյալն է. «Հայաստանը բազմիցս պատրաստակամություն է արտահայտել միանալու Կոնվենցիային՝ ընկալելով այն որպես չափազանց վնասակար սովորական գեներալի մի ամբողջ դաս վերացնելու գործիքներից մեկը: Կոնվենցիային Հայաստանի միանալը կախված է տարածաշրջանի մյուս երկրների՝ Կոնվենցիային հետևելու և դրա ռեժիմին ենթարկվելու պատրաստակամությունից: Այս համատեքստում մենք հավատացած ենք, որ տարածաշրջանի երկրների միաժամանակյա միացումը Կոնվենցիային կապահովի Կոնվենցիայի արդյունավետությունը և փոխադարձաբար կնվազեցնի անվտանգությանն ուղղված սպառնալիքների ընկալումը տարածաշրջանում»: Մեջբերումը «Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը Օտտավայի կոնվենցիայի և հակահետևակային ականների հիմնախնդրի շուրջ» փաստաթղթից է, որը շրջանառվել է 2006թ. սեպտեմբերի 18-22-ը կոնվենցիայի մասնակից պետությունների՝ Ժնևում կայացած 7-րդ հանդիպման ժամանակ:

ներկայիս քաղաքականությունը: Պաշտպանության և անվտանգության հետ կապված հարցերում ԵՄ-ն զիջում է հարավկովկասյան տարածաշրջանում ակտիվ մյուս միջազգային դերակատարներին, մասնավորապես Ռուսաստանին, ԱՄՆ-ին, ԵԱՀԿ-ին և Հյուսիսատլանտյան դաշինքին, որոնք առավել ծանրակշիռ դեր են խաղում Հայաստանի և տարածաշրջանի մյուս պետությունների անվտանգության և պաշտպանության օրակարգի ձևավորման գործում: Այնուամենայնիվ, հարևանության քաղաքականությունն այնպիսի գործընթաց է, որն իր ճկունության շնորհիվ թույլ է տալիս կողմերին պարբերաբար վերանայել և վերափոխել համատեղ գերակայությունները, այդ թվում՝ արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում:

Այսպիսով, Հայաստանի օրինակով կարելի է տեսնել, որ Եվրամիությունը պետք է լուրջ խոչընդոտներ հաղթահարի՝ ընդհանուր արտաքին, անվտանգության և պաշտպանության քաղաքականության բնագավառում իր դերակատարությունը մեծացնելու համար: Հարավային Կովկասի երկրների (ուշացած) ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում չի կարող քողարկել այն սահմանափակումները, որոնք առկա են տարածաշրջանի նկատմամբ Միության վարած քաղաքականության մեջ: Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցչի գործունեությունը և Եվրոպական անվտանգության ու պաշտպանության քաղաքականության հովանու ներքո Վրաստանում իրականացված առաքելությունները¹⁴ կարևոր նախաձեռնություններ են, որոնց մասշտաբները, սակայն, համեմատաբար փոքր են: Հատուկ ներկայացուցիչը, օրինակ, անմիջականորեն ներգրավված չէ հակամարտությունների կարգավորման միջնորդական ջանքերում և մյուս շահագրգիռ միջազգային դերակատարների համեմատ (Ռուսաստան, ԱՄՆ, ՄԱԿ, ԵԱՀԿ, իսկ վերջերս նաև ՆԱՏՕ) պակաս տեսանելի ու ազդեցիկ է:

Թեև Հարավային Կովկասն իր «պաշտպաններն» ունի ինչպես Եվրահանձնաժողովում, այնպես էլ Եվրախորհրդարանում (վերջինիս Արտաքին կապերի հարցերով հանձնաժողովը հրապարակել է մի քանի հաշվետվություն՝ պաշտպանելով կովկասյան տարածաշրջանային կայունության պակտ ձևավորելու գաղափարը), ու թեև վերոհիշյալ գործոնները նպաստում են Հարավային Կովկասի նշանակության մեծացմանը, այդուհանդերձ Եվրամիության անդամ պետություններն առայժմ ակտիվորեն ներգրավված չեն տարածաշրջանի գործերում: Նախկին խորհրդային վեց հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս) հետ հարաբերությունների հետագա զարգացմանը միտված նորահռչակ Արևելյան գործընկերության ծրագիրը հաջողության դեպքում կարող է լրացնել այդ «բացը»: Ինչ վերաբերում է ԵՀԶ-ին, ապա, լավատեսների գնահատականներով, այն կարող է համարվել ձեռքբերում, որը

¹⁴ 2004-05 թթ. Վրաստանում իրականացվել է օրենքի գերակայության ամրապնդմանը նվիրված առաքելություն, իսկ 2008 թ. վրաց-ռուսական զինված հակամարտությունից հետո ԵՄ-ն տարածաշրջան է ուղարկել 200 դիտորդներից բաղկացած մոնիտորինգի առաքելություն, որը պետք է նպաստի տարածաշրջանում կայունության վերահաստատմանը:

տարածաշրջանի երկրների կայունացումը և արդար կառավարումը կապում է տնտեսական և սոցիալական լծակների կիրառման հետ: Այս համատեքստում քաղաքական երկխոսությունն ընկալվում է իբրև օժանդակ, երկրորդական գործոն: Թերահավատների համոզմամբ, ԵՀԶ-ում ընդգրկված նախկին խորհրդային հանրապետությունների հետ հարաբերությունների խորացումը բացակայում է Եվրամիության արտաքին քաղաքական գերակայությունների օրակարգից: Դա պայմանավորված է մի շարք պատճառներով, այդ թվում՝ ԵՄ-ի անդամ պետությունների միջև առկա տարածայնություններով, հարավկովկասյան տարածաշրջանի վերաբերյալ ունեցած բացասական ընկալումներով, տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման խնդրում Ռուսաստանի հետ համագործակցելու դժվարություններով և տարածաշրջանում ներգրավվածության իմաստով ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին զիջելու հանգամանքով: Այսօրինակ գնահատականների կողմնակիցները հավատացած են, որ քաղաքական երկխոսությունը ցանկալի է, բայց մյուս շահագրգիռ կողմերի գործողությունների համեմատ շատ արդյունավետ լինել չի կարող¹⁵:

ԵՄ-ի՝ քաղաքական երկխոսության եղանակներն ու միջոցները թե՛ ԵՀԶ-ի և թե՛ այլ նախաձեռնությունների ու ծրագրերի շրջանակներում, ըստ էության, բաց թողնված հնարավորությունների և չօգտագործված ներուժի օրինակ են: Ասվածը վերաբերում է թե՛ Մերձավոր Արևելքին և Հյուսիսային Աֆրիկային, որի երկրների հետ Միությունը երկարատև համագործակցության փորձ ունի, և թե՛ նախկին ԽՍՀՄ այն երկրներին, որոնց հետ հարաբերություններ հաստատվել են ոչ վաղ անցյալում: Թվում է՝ երկու հարևան տարածաշրջաններում էլ ԵՄ-ն խուսափում է իր տրամադրության տակ եղած ռեսուրսների ողջ զինանոցը գործի դնելուց: Խնդրի էությունն այն է, որ ԵՀԶ-ի ընդհանուր նպատակը բաց և ազատ երկխոսության միջոցով Միությունը բարեկամ պետությունների օղակով «շրջափակելն» է, ինչը ենթադրաբար պետք է ապահովի կայունություն, սակայն ԵՀԶ գործողությունների ծրագրերը հուշում են, որ ԵՄ-ն ցանկանում է փոփոխություններ տեսնել հարևան երկրներում, իսկ փոփոխությունները, ինչպես հայտնի է, շատ հաճախ ուղեկցվում են լուրջ ցնցումներով: Եվրամիության համար մինչ օրս կարծես թե նախընտրելի է եղել կայունության պահպանումը հարևան տարածաշրջաններում: Ուստի ընդհանուր արդյունավետության իմաստով ԵՀԶ-ն՝ իբրև քաղաքական համագործակցության մեխանիզմ, բավականաչափ տպավորիչ չէ: Այդուհանդերձ, առևտրատնտեսական կապերի, էներգետիկ անվտանգության, ներգաղթի և քաղաքացիական հասարակության զարգացման և մյուս ոլորտներում ծավալվող համագործակցությունը կարող է ժամանակի ընթացքում իր դրական հետքը թողնել քաղաքական երկխոսության վրա: ԵՀԶ-ն, անշուշտ, մեծացնում է ԵՄ-ի՝ հարևան պետությունների հետ առավել խորը հարաբերություններ կառուցելու հեռանկարները, այդ թվում՝ բազմաթիվ հանդիպումների, ավելացված ֆինանսական օգնության, մեծաքանակ համաձայնությունների և նորանոր նպատակների

¹⁵ St' u Katja Weber, Michael E. Smith and Michael Baun, ed., *Governing Europe's neighbourhood: partners or periphery?* (Manchester: Manchester University Press, 2007), էջ 73:

սահմանման շնորհիվ: Միջազգային համագործակցություն անհնար է ծավալել առանց փոխվստահության պաշարների և շփման հնարավորությունների: ԵՀԶ-ի քաղաքական երկխոսության մեխանիզմները, անկասկած, նպաստում են թե՛ մեկին և թե՛ մյուսին: Երկարաժամկետ հատվածում ԵՀԶ-ն կարող է առավել արդյունավետ դառնալ միջազգային սոցիալիզացիայի և նյութական նոր խթանների (առևտուր և օգնություն) ավելացման շնորհիվ, իսկ նորաստեղծ Միջերկրածովյան միությունը և Արևելյան գործընկերության ծրագիրը կարող են լրացնել ԵՀԶ-ի բացերը՝ զարգացնելով ԵՀԶ-ի հիմնական տարածաշրջանային ուղղությունները: Թեև գործընկեր պետություններին առնչվող իր ծրագրերն իրականացնելիս Եվրամիությունը ստիպված կլինի դիմակայել Ռուսաստանի և ԱՄՆ-ի մրցակցությանը, այնուամենայնիվ Միությունն այլ ելք չունի և պետք է հարաբերություններ կառուցի նոր հարևանների հետ: ԵՀԶ-ն հարաբերությունների կառուցման ճանապարհներից միայն մեկն է, որը թույլ է տալիս Եվրամիությանը հարևանների հետ աստիճանական մերձեցման ճանապարհով ավելի մեծ դեր խաղալ եվրոպական աշխարհամասում խաղաղության և բարեկեցության երաշխավորման գործում:

А. Ф. АРУТЮНЯН — *Сотрудничество между Евросоюзом и Арменией в рамках Европейской Политики Соседства.* — Историческое расширение Европейского Союза (ЕС) стало крупным шагом на пути укрепления безопасности и роста процветания на европейском континенте, но оно также изменило внешние границы Союза. Эти обстоятельства не только открыли новые возможности, но и поставили новые задачи. Европейская Политика Соседства (ЕПС) является ответом на новую ситуацию. Планы Действий между ЕС и странами-партнерами содержат ряд приоритетных целей, выполнение которых является важнейшим элементом отношений ЕС с партнерами. Одна из этих целей - политический диалог, который предполагает сотрудничество по вопросам внешней политики и политики безопасности, включая региональные и международные вопросы, проблемы предотвращения конфликтов и урегулирования кризисов, а также общие угрозы безопасности. В статье анализируются внешнеполитические положения и положения о безопасности, включенные в Планы Действий и другие документы, подписанные со странами-участницами ЕПС из Ближнего Востока и бывших республик СССР. Автор на примере Плана Действий ЕС-Армения обсуждает эффективность исполнения положений ЕПС по внешней политике и политике безопасности и приходит к выводу, что стороны прогрессируют по наименее обязывающим направлениям сотрудничества. Подводя итог, автор подчеркивает, что ЕПС как механизм политического диалога недостаточно развит, имея, однако, серьезный потенциал.